

## ՆԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔԻ ԿԱՐՈՏԸ

«Նայրենիքը լի էր անթիվ հիշատակարաններով, որոնք հային ասում էին՝ «Դա քո երկիրն է, այսպեղ էին ապրում քո նախնիքը, եւ այսպեղ մեռան նրանք...»:

### ՐԱՖՖԻ

Կարսում մենք փորձում էինք մեր հին ծառի փրկված ճյուղերը գտնել՝ վաղուց ելք փնտրող չարենցյան կուրակված կարոպով.

«Էլ չես վերադառնա երբեք դու Կարս՝  
Տերյանի, Մահարու, կամ քո երգի հունով»:

Իր փոխարեն հիմա մենք ենք գնում նրա մանկության ճանապարհներով՝ նրան միշտ մեր կողքին զգալով, մեր հուշերի մեջ նոր փայավորություններ ավելացնելով, նրա երկերից նոր փողերով հարստացնելով մեր իմացածը: Ու շարունակ զարմանալով, թե ինչպես էր զգում իր և ընթերցողի մտերմության մշտականությունը.

«Եվ երկրում, ինչպես բարձրանա փոշի,  
Եվ հոգիներում, ինչպես հուշ հառնի,  
Ելնելով անցած օրերիս հուշից,  
Իմ ուրվականը պիտի սավառնի:  
Եվ քաղաքներում, և գյուղերում խուլ  
Անցորդներն՝ իրար անձանոթ անգամ,  
Աչքերում իրար և հայացքներում  
Պիտի միևնույն թախիծը կարդան...  
Եվ դեմքով փխուր և լուռ աչքերով  
Պիտի միևնույն սուգը հաղորդեն,  
Երգերիս հանդես անսահման ներող,  
Մոռացած բոլոր հանցանքներս արդեն.  
Կբանան ոմանք իմ գիրքը գուցե,  
Կթերթեն դանդաղ, կկարդան փողեր,  
Տարփամ շարժումով գիրքը կգոցեն,  
Եվ թախիծը խոր հուշս կողողեն...»:

Եղիշե Չարենցի ուրնահեպքերի փնտրությունի մեջ սրբազան մի հիվանդություն է գալիս-կաչում մեզ, որը «կարոպ առ Նայրենիք» անունն ունի, և Կարսում՝ ապուպապոպ այդ քաղաքում, հայրենակարոպ զգացումների բոլոր-բոլոր խրատումները չարենցյան կարոպ են ու խորին վերաբերմունք նրա հանդես: Մենք այնպեղ առաջին հերթին իր հայրական փունն ենք փնտրում՝ Աբգար աղայի փունը: Իսկ Երևանում, նրա անհայտ շիրմի անհույս փնտրությունից հետո մեր մոլոր քայլերը հաճախ մեզ բերում են պոետի հուշաքարի մոտ: Առիթ-անառիթ գալիս ենք այսպեղ, չարենցյան փաղեր մրմնջում՝ մոլոր հայացքով դարձյալ փնտրելով «խելագար ու հավիպյան վարարանդի» պոետի շիրմավայրը:

Այդ փափագը չէ՛ր Պարույր Սևակին որոնումների փարել ուղղիչ փանը նախկինում աշխատողների, Չարենցին այնպեղ փեսնողների հեպքերով, որոնցից մեկը ռադիոփան հարևանությամբ գտնվող նախկինում ազերաբնակ, բայց արդեն քանդված փան փեղն էր Սևակին ցույց փվել, ուր, իբր, գիշերով թաղել են Չարենցին: Նավասարի էր նրա ասածը, թե ոչ,

բայց այլ վկայություններ չկային, և օրինյալ Սևակի մարմնացույց վայրում հիմա Չարենցի հուշարձանն է, մեր ուխտարարդին:



1966 թվականին այսօրվա հուշարձանի փեղում մի հողաթումբ էր՝ հուշաքարով. «Այսփեղ կրեղադրվի Եղիշե Չարենցի հուշարձանը»: Մանկավարժական ինստիտուտի երկրորդ կուրսի ուսանող էինք: Ունեինք «Կռունկ» ուսանողական ակումբը, որն ուսանողների համար հանդիպումներ էր կազմակերպում արվեստագետների, գրողների, գիտնականների հետ: «Ավանգարդ» թերթը գնահատել էր «Կռունկի» գործունեությունը և թերթի մի էջը նվիրել ուսանողական այդ ակումբին: 1966 թվականի մարտի 13-ին ծաղիկներով Չարենցի հուշաքարին այցի եկած ուսանողներին լուսանկարն էր փայագրված այդ էջում. մենք կանգնած էինք սպագա հուշարձանի վայրում՝ հողաթմբի առաջ:

Ահա այդ այցելությունն էր առիթը, որ սկսեցինք հետաքրքրվել, թե ինչու հափկապես այսփեղ է կառուցվելու պոետի հուշարձանը: Իմ լրագրող ընկեր Թեռլիկ Մակույջանը, որ անձնական մտերմություն ուներ Պարույր Սևակի հետ, պոետին հարցրել էր այդ մասին, և Սևակը նրան պատմել էր Չարենցի թաղման վայրի հետ կապված իր որոնումների մասին: Վերևում մեր նկարագրածը հենց

այդ պատմության մասն է, որ կցկտուր ինձ փոխանցել էր Թեռլիկը: Նա ուներ Սևակի հետ իր այդ գրույցի ամբողջ ձայնագրությունը, սակայն Թեռլիկի վաղաժամ մահից հետո այդ ձայնագրության հետքը կարծես թե կորավ: Դեռ հույս ունեմ, թե Թեռլիկի այրին և դուստրը, բազում ձայնագրությունների միջից մի օր կկարողանան առանձնացնել Սևակի հետ հիշյալ գրույցը, և նոր լույս կսփռվի Չարենցի թաղման վայրի հետ կապված այդ խրթին հարցի վրա:

Հուշարձանի կառուցումից հետո այդ վայրը իրապես ուխտարարդի դարձավ:

Չարենցասեր հասարակության կողմից առանձին այցերից գալիս այլևս ավանդական հավաքներ են կազմակերպվում պոետի ծննդյան ու եղերական մահվան փառելիցներին:

Դրանք վերածվում են հուշապատմի, ասմունքի, երգի, հրաշալի ցերեկությունների, և պոետի անունը, նրա անմահ գործերը շարունակում են մնալ սերունդների շուրթերին: Այս հուշարձանը նաև մի փեսակ մեկնարկային վայր է՝ «խոստովանության» ու Չարենցից «իրավունք



վերցնելու» վայր բոլոր նրանց համար, ովքեր այցելության են մեկնում Կարս, ուր Չարենցի հայրական փունն է, ուր նրա ոսկնահետքերն են:

Այդ կուտակված կարոտների թելադրանքով էր, որ 2005 թ. մարտի 12-ին, պոետի ծննդյան նախորդ օրը, Կարսի ճամփան բռնեցինք՝ ուխտավորի հավաքքով ու նաև մի ներքին

հպարտությամբ, թե Չարենցի հայրական փուն ենք ուրք դնելու՝ որպես սրբավայրի և... ծննդյան 108-ամյա հոբելյանն ենք նշելու հնաբույր այդ փան շեմին:

Եթե մարդկայնորեն ու կամովին գերի ես մնում հազար-հազար կարոտների, որոնք գալիս-խառնում, փակն ու վրա են անում քո ամենօրյա մրաժումը, վերհուշի և արթնացումի անթեղված զգացումով հրամայաբար իշխում քեզ վրա, ուրեմն պատմական Նայասփանի ուրվապատկերը հայացքիցդ անբաժան է, մանավանդ, եթե մեկ անգամ եղել ես քո ապուպապերի երկրում ու չարենցյան կուրակված կարոտն է հորդել քո մեջ՝ իր իսկ մտորումների հանգույն. «Նաճախ պատկերանում է նա ինձ որպես վաղեմի մի բարեկամ. վաղեմի ծանոթի մի նման, որին ես շաք առաջ եմ հանդիպել, բայց կորցրել եմ հետո...»:

Չարենցն է իր «Երկիր Նաիրի»-ով օգնում, որ Կարսի կարոտը քո մեջ մշտապես ունենաս, կամ էլ Գյումրի՞ն, որի հնամենի փողոցներն ու փնտրել կառուցվեցին Կարսից այսպեղ գաղթած վարպետների ձեռքով՝ հար և նման Կարսին՝ արմաքի և ճյուղի ճամփեն մշտապես ու մշտարթուն իրենց հետ ունենալու հավաքով:

Կարս կապարած մեր այցելությամբ մենք փորձում ենք Չարենցի ուրախերգներից մաքրել մամուռները, բանուկ դարձնել այն ճանապարհը, որ դեպի նրա հայրական փուն է փանում, փանում բոլոր այն վայրերը, որոնց նկարագրությունը կա «Երկիր Նաիրի»-ում: Եվ քանի որ Կարս փանողն առաջին հերթին կարոտն է, ամեն պահի էլ մեր մեջ կուրակված կարոտներին հագուրդ փալու ինչ-որ մի եղանակ, ինչ-որ մի միջոց ենք գտնում: Միջոցներից առաջինը «Երկիր Նաիրի»-ն է: Նազար անգամ կարդա Չարենցի այդ հրաշալի գործը ու նորից գնա Կարս՝ քո կարոտը նոր կուրակումներ կունենա, որոնք ելք են փնտրում Առաքելոց եկեղեցու մոտ, որի քանդակագործ գմբեթին խաչի փոխարեն կիսալուսնի գոյությունն է՝ անհարիր այդ փառահեղ շինության ոգուն ու կոչումին: Կփորձես այդ ելքը գտնել Վարդանի կամրջի վրա, ու փեսիլքի պես քո աչքին ու մտքին կամրջի փակով անցնող Ախուրյանի վրակ Կարս գետը քեզ կթվա Տղմուտ գետ, և Վարդան գորավարի ու Ավարայրի դաշտի լուսավոր փեսիլքը քեզ կհեռացնի այդ փարփամ իրականությունից:

Կբարձրանաս «խիստ ու խոժոռ» բերդի պարիսպների վրա, ու, փեսնելով անառիկ միջնաբերդն ու ոչ մի ավեր չկրած պարիսպները, ճմլվելու չափ սրտսեղմոց կզգաս մեր պարմության մեջ շարունակ կրկնված՝ բերդերը դավաճանությամբ հանձնելու իրողությունից:

Այդ փրկմությամբ, այդ մրաժումներով քայլերդ քեզ նորից կրանեն Կարսի այգու հարևանությամբ երկաթե կամրջի մոտ, որին հանդիպակաց փողոցում, ներկայիս Էրզրումի փողոց թիվ 100 հասցեում, Աբգար աղայի՝ Եղիշե Չարենցի հոր փունն է:

Բայց ամեն ինչ հերթով:

*Շարունակելի*